

ները սակայն կանգ կ'առնեն այդ կետին, ու մեծ մասով նուիրում են պայքարի ու ինքնակեդրոնացման ներկայացումներուն եւ նկարագրութեան, ու Աստուծոյ նկատմամբ հաւատքով ստացում ծանօթութեան մը ստուերագրութեան. քիչ անգամներ միայն Աստուծոյ ծանօթութիւնը ուղղակի լոյսով կը յայտնուի:

Ես կը խորհիմ թէ Գրիգոր Նարեկացի աւելի մղումով ըլլայ քերթողական տեսակէտներէ, իր Ազօթամատենին տալու իր ունեցած արդի կազմը: Ասոր կը նպատէր նաեւ նախապէս ստեղծած իրեն յատուկ քերթողական եղանակն ալ, որ բարացուցական եւ աշխարհական է: Գաղափար, զգացում, հոգեկան վիճակ կը ներկայացունին պատկերացումներով եւ զգալի ձեւերով. բանաստեղծը կը թանձրա-

ցնէ, կը սաստկացնէ, կը շեշտէ ամէն ինչ. յետոյ հեղինակը օժտուած է նաեւ այնպիսի կարողութիւններով, որ կարելի կ'ընեն զրական արուեստի այս եղանակը. ունի չքեղ երեւակայութիւն, հուժկու զգայականութիւն եւ ամէն բան նիւթականացնելու դիւրութիւն. Նարեկը այս քերթողական գաղափարականին իրականացումն է: Ազօթամատենի բնագանգական եւ կամ տրամաբանական նպատակը կը մնայ բանաստեղծին մտքին մէջ՝ իբր հեռաւոր տուեալ մը, իբր իր կեանքին նպատակը: Գործնականապէս Նարեկի բաները կ'ձեռն զանգուածներ կ'ըլլան, առնոց վրայ կ'իրարկելու իր քերթողական արուեստը. Նարեկ այդ արուեստին մարմնացումն է:

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԿԵԶԱ ԿԱՐՏՈՆԻ

ԷԿԷՐԻ ԱՍՏՂԵՐԸ

Թարգմանուած հունգարերէն բնագրէն

Էջ 650 - Գին՝ \$ 3,50

Մինչեւ 31 Դեկտեմբեր զնոյներուն՝ 25% զեղչ
12 օրինակ զնոյներուն մէկ օրինակ ձրի

Կեզա Կարտոնի ներկայ դարուս հունգար լաւագոյն վիպասանն է Ստեփան Յուլայֆի հետ: Իր «Էկէրի աստղերը», քարգմանուած բազմաթիւ լեզուներու, հայ ընթերցողին համար մասնաւոր շահեկանութիւն մը ունի: Վէպին խորքը պատմական է, երբ 1500ի ժամանակները հունգար ժողովուրդը Օսմանցիներու դէմ մականագրական պատերազմներ կը մղէր իր ազատութեան համար: «Էկէրի աստղերը» ունի արեւելեան գոյն, մտայնութիւն, վառ երեւակայութիւն եւ դէպքերու, հանգոյցներու այնպիսի կննդներ, որ միայն Կեզա Կարտոնի պէս հեղինակ մը կրնայ տրամաբանական մամբով գանձնաբերել:

Շարժում եւ ուժգին է, անյնակարգութիւններով, միայն կարելի է հեռի հեռ կարգաւ եւ գարմանալ այն բազմաթիւ նկարագիրներուն վրայ որ հեղինակը ստեղծած է իր հերոսներուն դէմքն ու դիրքերը ճշտելու համար:

ՔԵՊԻ ԱՒԱՐԱՅՐ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՎ

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Շար. տե'ս Բազմ. 1961, Թ. 6-8, էջ 155)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ ԶՈՐՐՈՐԴ ԱՐԱՐԻ

Վարդան - Սպարապետ Հայաստանի
Արմենակ - Հրամանատար Արմաւիր բերդին
Սուրէն } հայ սպաներ
Վաղինակ }
Միհրան }
Սամուէլ - սպայ եւ լրտես
Վահան Մամիկոնեան
Վարսենիկ - կին Սուրէնի
Արիստակէս - գինեպան
Արշաւիր Կամսարական
Անանուն կին մը, Պահակ, եւ կիներու պարաւոր խումբ մը:

Տեսարանն է Արմաւիր բերդին մէջ: Բեմին խորքը եւ կողմնակի՝ աստամաւոր աշտարակներ: Կոշտ սեղան մը, աթոռներ, գէնքեր եւ վահաններ:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Սուրէն եւ Միհրան հարիւրապետներ

Սուրէն - Արմաւիր պաշարուած է: Մենք պիտի չկարենանք դիմանալ: Թշնամին թարմ ոյժեր կը հասցնէ: Նայէ՛, Միհրան, բարաններ եւ սանդուղներ անտառացած են վարը:

Միհրան - Հրամանատարը շատ մտածկոտ է:

Սուրէն - Գէթ առաջ յարձակումներով կարաւաններ կը կողոպտէինք, առատ աւար կը բերէինք. իսկ հիմա անօթի բուրդ պէս թառեր ենք այս աշտարակին ծայրը: Միհրան - Եւ սակայն Արմենակ վճռեք է ցմահ դիմադրել:

Սուրէն - Ի՞նչպէս դիմադրել. ի՞նչ ոյժ ունինք: Ժողովուրդը սովամահ է, բերդը վիրաւորներով, հիւանդներով եւ անօթիներով լեցուն է: Ի՞նչ յիմարութիւն ըրի

եւ Վասակին կողմը չանցայ: Խենթի մը ձեռքն ինկեր ենք:

Միհրան - Զգո՛յշ եղիր խօսակցութեանդ մէջ. եթէ հրամանատարը լսէ, քեզ պարիսպէն վար կը նետէ: Ես ալ երկար դիմադրելու շատ յոյսեր չունիմ:

Սուրէն - Մըջիւնի պէս թշնամին բերդին շուրջն հաւաքուեր է, եւ Արմաւիրը Կովկասի յաղթանակի բանալին կը համարուի. պարապ յոյսեր. եւ մենք հոս շանսատակ պիտի ըլլանք: Իմ մահէս վերջ՝ ո՛չ Հայաստան կայ, ո՛չ աշխարհ: Ամէն մարդ իրեն համար կ'ապրի:

Միհրան - Ի՞նչ կրնանք ընել. պէտք է ճակատագրին հպատակիլ: Հրամանատարը երկաթի պէս կարծր է, դժուար է իր կամքը ծռել:

Սուրէն - Ապստամբիլ այդ բռնաւորին դէմ, գինքը բերդէն վար նետել, բանալ դռները եւ թշնամին յանձնուիլ:

Միհրան - Մեզ բոլորս մորթազերծ կ'ընեն:

Սուրէն - Մի՛ կարծեր. Վասակ մարդու պէտք ունի՝ իր շարքերը զօրացնելու համար: Արմաւիրի յանձնումն իրեն համար վճռական յաղթանակ մ'է:

Միհրան - Զաւազանք վտանգաւոր գործ է ապստամբել, ո՛չ կողմնակիցներ ունինք, եւ ոչ ալ Վասակին վրայ կարելի է յոյս դնել:

Սուրէն - Ժողովուրդին մէջ, գինուորներուն մէջ դժգոհներու բանակ մը կայ. կայծ մը կը բռնէ հրդեհ տալու համար:

Միհրան - Գաղտնիքը շուտով դուրս կ'ելլէ եւ ո՞վ կրնայ մեզ Արմենակին սուրէն ազատել:

Սուրէն - Ես վճռեք եմ գործի անցնիլ: Սիրտս կը ճմուռի՝ երբ կաշի եւ ոսկր դարձած կիներ, մանուկներ ու ծերեր կը տեսնեմ:

Միհրան - Լռէ՛, Արմենակը կու գայ:

ՏԵՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Արմենակ եւ վերինները

Արմենակ - (Բեմ ելլելով) Բերդին հա-
րաւային կողմի պաշտպանութիւնը շատ
տկար է, թշնամին կռահեր է եւ շարունակ
յարձակումներ կ'ընէ: Սուրէն, պաշտո-
նիդ մէջ թերացեր ես:

Սուրէն - Տէր հրամանատար, կմախք
դարձած անոթի մարդիկ չեն կրնար պա-
տերազմիլ: Մեր շարքերը կը նուազին,
բերդին անկումը անխուսափելի է, աւե-
լորդ է դիմադրել:

Միհրան - Մթերանոցները դատարկ են,
սով կայ, սո՛վ:

Արմենակ - Սուրէն, անձնատուր ըլլա-
լու մասին անգամ մըն ալ չխօսիս, ոչ իմ
առջեւ եւ ոչ ուրիշներուն: Դուն քու
զխուղ հետ կը խաղաս: Արմաւիր զէն-
քերը վար չի դնէր:

Դուրսէն - (Խառն աղմուկ) Հա՛ց կ'ու-
ղենք, ջո՛ւր կ'ուզենք: Պատառ մը հա՛ց,
կը մեռնի՛մ...:

Սուրէն - Կը լսէ՞ք, Տէր հրամանատար,
մայրեր, տղաներ հաց եւ ջուր կ'ուզեն:

Արմենակ - (Մտածկոտ) Հաց եւ ջուր
կ'ուզեն. ուրեմն, հայրենիքը վաճառենք՝
պատառ մը հացի համար: Անպատիւ դե-
րինք ըլլանք՝ կաթիլ մը ջուրի համար:
Թող մեռնին քանի մը կիներ, տղաներ,
բայց ապրի Հայաստան. առանց զոհի՝
չկայ յաղթանակ. ներկան կը մեռնի՝ ա-
պագային համար: (Սպանքուռ) Գացէք
ձեր դիրքերը, զինուորները հարկ եղած
պարէնը պիտի ունենան:

Սուրէն - Քեզմէ պիտի պահանջեն այս
թշուառ ժողովուրդին արիւնը: (Սուրէն
կը մեկնի):

Արմենակ - (Ետեւէն) Զար որդ մը սիր-
տը կը կրծէ: Լաւ գիտցէք դուն եւ նը-
մաններդ. Արմենակ կը մեռնի, բայց Ար-
մաւիրի դռները չի բանար, նոյնիսկ եթէ
սովը կմախք դարձած իր առջեւ ցցուի:

ՏԵՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Պահակ եւ Արմենակ

Պահակ - (Բարեւելով) Տէր հրամանա-
տար, թշնամիներն այս թուղթը պարիս-
պէն վեր նետեցին. (Կը յանձնէ Արմենա-
կին):

Արմենակ - Ի՞նչ գրուած էր:

Պահակ - Տէր իմ, ես կարդալ չեմ գի-
տեր:

Արմենակ - (Թուղթը կարդալով) Տեա-
նողներ եղա՞ն:

Պահակ - Ամբոխը վրան յարձակեցաւ,
բայց ձեռքէն առինք, միայն հարիւրա-
պետ Սուրէնը կարգաց եւ...

Արմենակ - Եւ... Ի՞նչ:

Պահակ - Եւ բարձրաձայն կարդալով
պոռաց. Ձենք ուղեր շանսատակ ըլլալ,
բանանք բերդին դռները. թշնամին կը
խոստանայ խնայել մեր կեանքերուն եւ
առատ հաց ու ջուր տալ:

Արմենակ - (Բարձրաձայն կարդալով
թուղթը) Յանձնուեցէ՛ք, ձեր կեանքին եւ
ինչքերուն պիտի խնայենք. առատ հաց եւ
ջուր պիտի ունենաք: Մի՛ հետեւիք խե-
լագար հրամանատարի մը. զինքը պա-
րտապէս վար նետեցէք, սպաննեցէք: Բա-
ցէ՛ք դռները. մենք հայեր ենք, եղբայր-
ներ ենք: Հայու արիւն է որ կը թափի.
(Թուղթը պատառ պատառ ընելով քանի
մը քայլ կ'առնէ): Ստորագրուած՝ Վա-
սակ Սիւնեցի: Դաւաճան, ուրացող (Դար-
ձեալ կը քայլ մտածկոտ):

Պահակ - Հրամաններ ունի՞ք:

Արմենակ - Ո՛չ, կրնաս մեկնիլ: (Առան-
ձին) Սիւնեաց բանակն է պարսպին տակ:
Մատնիչ մը վարը: Ո՛չ, դաւաճան Վա-
սակ, Արմաւիր իր դռները չի բանար:
Դուրսէն - (Ամբոխի ձայներ) Հրամա-
նատարը կ'ուզենք, հրամանատարը:

ՏԵՍԻՆ ԶՈՐՐՈՐԴ

Միհրան եւ Արմենակ

Միհրան - (Բեմ ելլելով) Արմենակ,
ժողովուրդը խռովութեան մէջ է, քու
վերջին խօսքդ կ'ուզէ:

Արմենակ (Մօտենալով քեմին անկիւնը)
Հա՛յ ժողովուրդ...

Դուրսէն (Շատ աղմկալից) Հաց եւ ջուր
կ'ուզենք. մեր զաւակները սոված են կը
մեռնին: (Ուրիշ ձայներ) Բացէք դռները:

Արմենակ - (Կանչելով պահակը) Պա-
հակ, գնա՛ իսկոյն գնդապետ Վաղինակին
եւ ըսէ՛ թող անմիջապէս 200 տիգաւորներ
դրկէ եւ շրջապատէ այս խելագար ամբո-
խը: (Ամբոխին) Հայ ժողովուրդ. Արմա-
ւիր իր դռները չի բանար:

Միհրան - Արմենակ, ի՞նչ կ'ընես. կըր-
նայ ապստամբութիւն պայթիլ. քաջալե-
րական խօսքի մը կարօտ են:

Արմենակ - Ես գիտեմ թէ ով զիրենք
ոտքի հանեց. կոյր ամբոխը միայն ոյ-
ժէն կը հասկնայ:

Միհրան - Գթալից սուտն ալ կրնայ զի-

րենք միմիարեւ. մայրեր եւ տղաներ են
պոռացողները:

Արմենակ - Վաղը առատ հաց եւ ջուր
պիտի ունենան, չեն ուղեր պատուով
մեռնիլ, թող ամօթով մեռնին:

Միհրան - Ի՞նչ ըսել կ'ուզես:

Արմենակ - Այդ իմ գիտնալիքս է:

ՏԵՍԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պահակ, Սուրէն եւ վերինները

Պահակ - Ամբոխն արդէն շրջապատ-
ուած է:

Սուրէն - (Բեմ վազելով) Ի՞նչ կը նը-
շանակէ շրջապատել մեր կիները, զաւակ-
ները, մեր մայրերն ու հայրերը: Յեղա-
փոխութիւնը արդէն պայթել է: (Ամբո-
խին) Փչեցէք շղթան եւ ներս խուժեցէք:
Դուք էք ձեր կեանքին տէրը:

Արմենակ - Սուրէն, գլխուղ հետ կը
խաղաս: Կը ցաւիմ քու վրադ:

Սուրէն - Դուն կը խաղաս այս անմեղ-
ներուն կեանքին հետ: Դանակը ոսկրին
հասաւ, ալ կարելի չէ դիմանալ: Վար-
դան արդէն պարտուել է, եւ թերեւս մե-
ռած ալ ըլլայ, եւ դուն սին յոյսերով դո-
հեր կը պահանջես:

Արմենակ - (Բեմին եզերքին երթալով:
Դուրսէն խուլ աղմուկ... հա՛ց... ջո՛ւր):
Ժողովուրդ, քեզի մէկ խօսք ունիմ ըսե-
լիք. Արմաւիր բերդն իր դռները թշնա-
միին չի բանար:

Սուրէն - (Դաշոյնով Արմենակին վրայ
կը յարձակի քիկուսկէն. սակայն պահա-
կը անդր ձեռքի օղի մէջ կը բռնէ) Թող,
լաւ է ինքը մեռնի՛, քան այս թշուառ
բազմութիւնը:

Արմենակ - (Սուրը ձեռքը՝ Սուրէնին
դիմաց կանգ առնելով) Սուրէն, գիտէի
քու սահրանքներդ. դուն զրգուցիր այս
ամբոխը եւ հիմա դիմակդ վար առիր ու
յայտնապէս դաւեցիր քու հրամանատա-
րիդ զէմ: Քեզի մէկ բան կը մնայ. առ
այս դաշոյնը եւ սիրտդ մի՛ն՝ եթէ քաջ
ես (դաշոյնը Սուրէնին առջեւ գետին կը
նետէ) եւ մեռնիլ գիտես:

Սուրէն - (Կ'առնէ դաշոյնը եւ դողդո-
ղալով իր սրտին կը տանի՝ բայց ձեռքէն
վար կ'իյնայ):

Արմենակ - Վատ մըն ես, ուրեմն. ա՛յս-
պէս կը մեռնին (Դաշոյնը Սուրէնին սիր-
տը կը մխէ):

Սուրէն - Ա՛հ... (Կ'իյնայ գետին):
Միհրան - Խե՛ղճ Սուրէն. մեռաւ: (Սու-

րէնին գլուխը վեր վերցնելով) Խե՛ղճ
Սուրէն:

Արմենակ - Պահակնե՛ր, նետեցէք այս
դիակը պարսպէն վար, թող նուէր ըլլայ
Վասակին:

Միհրան - Հիւանդ էր, ջիղերը թուլ-
ցեր էին, սիրտը չէր դիմանար թշուառ-
ներու լացին:

Արմենակ - Այդպիսի հիւանդներ ժան-
տախտ են բանակի մը համար: (Հեռաւոր
փողի ձայն):

Միհրան - Փողի ձայնը վարէն կու գայ,
արդեօք յարձակումի նշա՞ն է:

Արմենակ - Մենք յարձակումներէ վախ
չունինք:

Միհրան - Անպայման մեր բերդին մէջ
չփոթութիւն եւ ջղային վիճակ ստեղծե-
լու համար՝ երբեմն փողեր կը հնչեցնեն:

Արմենակ - Մեր ջիղերը լարուած աղե-
ղի պէս են. թող հաղար փողեր հնչեցնեն,
մենք բոռնցքով կը պատասխանենք:
(Միհրանին) Լաւ պիտի ըլլայ որ երթաս
ու բերդապահներուն այց մը տաս, որ
միշտ արթուն տեղերնին ըլլան (Միհրան
կը մեկնի):

ՏԵՍԻՆ ՎԵՅԵՐՈՐԴ

Արմենակ եւ Վաղինակ

Վաղինակ - (Բեմին հակառակ կողմէն
մտնելով) Փառք քեզ, Աստուած, հաղիւ
քեզի գալու ժամանակ դտայ:

Արմենակ - Վաղինակ, մինչեւ հիմա
ո՞ւր էիր:

Վաղինակ - Բերդին հարաւային կողմը
անպաշտպան ձգուած էր, ստիպուեցայ
հոն վազել: Ու՞ր է Սուրէնը, իր տեղը
չէր:

Արմենակ - Սուրէնը միւս աշխարհ գը-
նաց: Չլսեցի՞ր իր ըրածները:

Վաղինակ - Անորոշ փափուքներ միայն
լսեցի. չուզեցի հաւատալ: Արժէքաւոր
սպայ էր:

Արմենակ - Խուժանին զուլան անցած՝
ապստամբութիւն կ'ուզէր հանել: Կ'ու-
զէր զիս սպաննել, հաւատարիմ սպաները
բերդէն վար նետել եւ դռները բանալ:

Վաղինակ - Եթէ այդպէս է՝ արժանի
էր մահուան: Թշնամին բերդին զանազան
կողմերէն թեթեւ յարձակումներ կը փոր-
ձէ, սակայն միշտ կորուստով ետ կը քաշ-
ուի:

Արմենակ - Մեր կողմէն մեռնողներ,
ծանր վիրաւորներ եղա՞ն:

Վաղինակ - Ո՛չ, թեթեւ վիրաւորներ հազիւ ունեցանք. եւ ամէն անգամ քանի մը տասնեակ զինուորներ կը փոխէր պարսպներուն տակ:

Արմենակ - Եւ կ'ուզեն որ Արմաւիր իր դռները բանայ:

Վաղինակ - Ո՛վ:

Արմենակ - Վերէն՝ խուժանը, վարէն՝ մատնիչ Վասակը:

Վաղինակ - Եթէ Յազկերտի բոլոր բանակները գան՝ նորէն չենք յանձնէր:

Արմենակ - Ա՛յդպէս պէտք էր ըսել նաեւ Սուրէնը: Զինուորը՝ մահուան պահակ. յաղթել կամ ճեղքել:

Վաղինակ - Ես Միհրանն ալ քիչ մը թոյլ գտայ:

Արմենակ - Սուրէնն էր իր չար ոգին:

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Միհրան եւ վերինները

Վաղինակ - Միհրան եւ Սուրէն մտերմներ էին, անշուշտ վշտացած պիտի ըլլայ Սուրէնի մահուան. սակայն աս աւելի տրամաբանող է, կ'ըմբռնէ թէ Արմաւիր Հայաստանի յաղթանակներու բանալին է եւ մահուան դնով պէտք է պաշտպանել զայն:

Արմենակ - (Միհրան բեմին անկիւնէն հագիւ կ'երեւայ) Ես Միհրանը կը սիրեմ, իր բազուկը առիւծի թաթ է. Կովկաս մեկնող Պարսիկներու սարսափն եղաւ:

Միհրան - (Առաջ գալով) Ներեցէք ինձ, Տէր Հրամանատար, եթէ երբեմն այս սիրտը թուլացաւ:

Արմենակ - Ես վստահութիւնս չեմ կորսնցուցած, սիրելի Միհրան. մարդկային է՝ երբեմն զէպքերէն ազդուիլ, բայց դերմարդկային է տիրապետել իր զգացումներուն:

Վաղինակ - Մեր ոյժերն անշուշտ առանջին օրերուն պէս չեն. պէտք է մենք ըստ պահանջի նախ հաւատք ունենանք մեր զորքին, եւ նոյնը ներշնչենք զինուորներուն եւ ամբողջին: Կը խորհիմ թէ լաւ պիտի ըլլայ զիջելները ջահաւորել բերդը. թշնամին պիտի կարծէ թէ մեր ոյժերն անսպառ են եւ անվախ ուրախութեան մէջ ենք:

Արմենակ - Գէշ գաղափար չէ: Զինուորներուն ալ քիչ մը զինի տուէք, թող բարձրաձայն երգեն:

Վաղինակ - Մեր փոքրիկ յաջողութիւնները բաւական բարձրացուցին զինուորին բարոյականը: Ամէն յարձակումի՝ խանդավառ կը պատասխանեն:

Միհրան - Մանաւանդ Սասունցիները, կարծես հաճոյք կը զգան պատերազմներէ:

Արմենակ - Բայց միշտ արթուն պէտք ենք ըլլալ: Միհրան, լաւ պիտի ըլլայ որ երթաս եւ խմբապետները հաւաքես, հրահանգ տաս՝ որ զիջել ցերեկ հսկեն ամէն կողմ. թշնամին չի քնանար, օձի պէս է, կը քաշուի եւ կը յարձակի: (Միհրան մեկնելու կ'ըլլայ) Եթէ հարկ կը տեսնես, պահակները կրկնապատկէ ամէն կողմ:

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Պահակ, Արմենակ եւ Վաղինակ, յետոյ Միհրան

Պահակ - Տէ՛ր հրամանատար:

Արմենակ - Առա՛ջ եկուր:

Պահակ - Բերդին հիւսիսային գաղտնի դրան կողմէն՝ մէկը ձեր անունը կու տայ:

Արմենակ - Ո՛վ պիտի ըլլայ, ես այդ վատերուն մէջ ծանօթ չունիմ:

Վաղինակ - Արմենակ, երթանք նայինք, թերեւս կարելոր լուր ունի տալիք:

Արմենակ - Լա՛ւ, երթանք. ի՛նչ մութ զիջեր է. հետք ջահ մը բեր: (Մեկնելու վրայ են):

Միհրան - (Ներս վագելով) Արմենակ, այս թուղթը քարին կապած՝ մէկը պարսպէն վեր նետեց:

Արմենակ - (Թուղթն առնելով) Վաղինակ, ջահդ ասդին բեր: (Կը կարդայ) «Արիաքսատ... հիւսիսային գաղտնի դրան առջեւն եմ»: Սամուէլն է, Սամուէլը... Ծուռ մեկնինք: Միհրան, դուն հոս կեցիր. ներկայութիւնդ կրնայ պէտք ըլլալ: (Կը մեկնին):

Միհրան - Եթէ խաբերայութիւն չէ, զարմանալի հրաշք է:

Պահակ - (Ներս գալով) Հարիւրապետ, այս երեկոյ, պարսպին վարը, տարօքինակ խօսակցութիւններ կը լսուին, կարծես խուճապ կայ, ոմանք Վարդան զօրավարին անունը կու տան, ուրիշներ կ'ըսեն թէ Կովկասի պարսկական ճակատը խորտակուել է, նոյնիսկ բերդին պաշարումը լքելու խօսքեր լսեցինք:

Միհրան - Երանի՛ թէ. սակայն, յոգնած զինուորներու փափաքներ են, շատ

կարեւորութիւն տալու չէ: Թերեւս հիմա որոշ լուրեր առնենք: (Պահակը ետ կը փաշուի):

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

Սամուէլ, Արմենակ, Վաղինակ, Միհրան եւ Վահան

Արմենակ - Միհրան, եկուր զրկուէ մեր սիրելի Սամուէլին հետ (Կը գրկուին):

Միհրան - Աչքերու չեմ կրնար հաւատալ, իսկապէս հրաշք է:

Վաղինակ - Միհրան Սամուէլն այդպիսի հրաշքներ կը գործէ:

Արմենակ - Մեր բանակին անբեկոյթ հոգին է:

Վաղինակ - Վասակին հաւերն ուտող աղուէն:

Սամուէլ - Վասակին խորհուրդներուն հետեւեցայ. սուրէն աւելի գաղտնի զօրաւոր զէնքեր կան. խաբէութիւն, ստախոսութիւն, կեղծիք, մէկ օրուան մէջ տասը զինակ փոխել, քծնիլ եւ դաւաճանել. ասոնք իր զէնքերն են եւ իրեն զէմ գործադրուեցան:

Վաղինակ - Ի՞նչպէս յաջողեցար հոս հասնիլ:

Սամուէլ - Շատ երկար պատմութիւն է, յետոյ կը պատմեմ. նպատակս էր Վահան Մամիկոնեան պատանին գտնել եւ ազատել պարսիկներու ձեռքէն: Հոտ առի թէ Կարէն զօրավարին բանակը կը գտնուի: Գիւղացի աշուղ ձեւացայ, սազ մը առի, եւ օր մը պարսիկ սպայի մը հանդիպեցայ Նախիջեւանի մէջ. սարսափած պատերու տակէն կը քայլէր, ծպտուած էր: Մօտեցայ եւ պարսկերէն հարցուցի՝ թէ Պարսկաստան ո՞ր ճամբով կ'երթան. ես, ըսի, Վասակի հաւատարմներէն եմ, զինքը աստուածի պէս կը պաշտեմ: Սպան չունչ առաւ եւ շատ մտերմացանք: Զինքն անվտանգ առաջնորդեցի պարսկական բանակը. ես եղայ իր աստուածը եւ ամենափաստահար բարեկամը: Այլ ի՞նչ ըսեմ, հոն պարեցի, նուազեցի: Եկաւ Վասակը, զիս ճանչցաւ եւ նոյնիսկ իր զմրուխտէ մատանիով կնքեց թուղթ մը, զիս ճորտութենէ ազատեց, եւ հազար կանգուն հող ալ պարգեւ տուաւ: Պիտի պահանջեմ այդ անիրաւէն:

Միհրան - Այս պատանին ո՞վ է:

Արմենակ - Վահան Մամիկոնեանն է, Վարդան զօրավարին Հմայեակ եղբոր մեծ դաւակը:

Միհրան - Եւ յաջողեցար զինքն ազատել...:

Սամուէլ - Ոչ միայն ազատել, այլ մէկ զօրավար եւ մէկ պահակ ալ դժոխք՝ Որմիզդին զոհ զրկեցի:

Վաղինակ - Սատանայէ՞ն ալ չվախցար: Սամուէլ - Ո՛չ, մանաւանդ թէ ինձ երեցաւ եւ ըսաւ. Ես Վասակի հոգին եմ, ըրէ՛ ինչպէս քեզի սորվեցուցի:

Միհրան - Ուրեմն, ճի՛շտ էր այն լուրը՝ թէ Վասակ խաբէութեամբ Վահանի կը փախցուցեր էր:

Արմենակ - Եւ Սամուէլն ալ զինքն ու իր պարսիկ աղբէրները խայտառակեց:

Սամուէլ - Ինչե՛ր քաշեր եմ, մինչեւ որ այս տղան համոզեցի որ հետս փախչի: (Վահանին) Վահան, հիմա ես դաւաճան ուրացող եմ:

Վահան - Դուն իմ սիրելի ազատարարս ես: (Կը պլլուի Սամուէլին) Միշտ միասին պիտի ըլլանք, այնպէս չէ՞:

Սամուէլ - Այո՛, միշտ միասին, եթէ Աստուած մեզ ողջ պահէ:

Վահան - Հօրեղբորմէս պիտի խնդրեմ որ քեզ զօրավար ընէ, եւ միշտ մեզի հետ մնաս, իմ կեանքս քեզի կը պարտիմ:

Վաղինակ - Արմենակ, փոքրիկ ուրախութիւն մը կ'արժէ ընել. մէկ երկու շիշ բանանք:

Արմենակ - Ո՛չ, Ժողովուրդը անօթի ծարաւ է, մենք չենք կրնար ուրախութիւն ընել:

Վաղինակ - Բերդին մէջ կայծակի առաջնութեամբ լուրը տարածուեցաւ: Վահանին ազատութիւնը իրենց համար յաղթանակ մը եղաւ:

Արմենակ - Լաւ, երկու շիշ զինի նշանակութիւն չունի: (Պահակին) Պահակ, երկու շիշ Գողթնի զինի բեր:

Սամուէլ - Խեղճ Արիստակէսը հոս պէտք էր ըլլայ:

Արմենակ - Արդեօք Վասակ այդ խեղճին միտը կերա՞ւ:

Սամուէլ - Եթէ զլուխն ազատեց՝ մեծ բան է:

Վաղինակ - (Դուրսէն հեռաւոր երգի ձայն) Ո՛վ են այս երգողները:

Միհրան - Մեր զինուորներն են, կ'երեւի խմելիք գտեր են, կամ այս խռովեալ կեանքին անուշութիւն տալու համար է:

Արմենակ - Բայց, Սամուէլ, չըսիր թէ ի՞նչպէս կրցար պաշարողներուն մէջէն մինչեւ բերդին դուռն հասնիլ:

Սամուէլ - Ո՛հ, շատ պարզ էր. այնչափ խառնակութիւն եւ այլացեղ մարդիկ

կան՝ որ չունեն իր տէրը չի կրնար դռնել: Ծեր պողպատաձառ ձեւացայ, Վահանն ալ կողով մը շալկեց եւ ծախելով, խնդացնելով քանի մը օր շրջեցաւ մէջերնին, լուրեր ալ առի. կովկասի մէջ Պարսիկները պարտուեցին եւ Վասակ կատաղած դայի պէս բերդին շուրջ կը դառնայ՝ օր առաջ գրաւելու համար: Սարսափ կայ մէջերնին՝ թէ Վարդան օրէ օր կրնայ հասնիլ:

Վաղինակ - Կեցցէ՛ մեր սպարապետը: Արմենակ - Կեցցէ՛ն մանաւանդ մեր քաջ տղաքը (Գիմին կը բերեն):

Միհրան - Ես մէջերնիդ ամէնէն երկտասարդն եմ, ես պէտք է բաժակները լեցնեմ: (Կը լեցնէ):

Արմենակ - Խմե՛նք մայր հայրենիքի կենացը:

Միհրան - Մեր ազգին քաղցր արեւուն կենացը:

Վաղինակ - Լաւ պիտի ըլլար որ սաղ մը ունենայինք եւ Սամուէլ պարէր, ինչպէս Կարէնի առջեւ պարած է:

Սամուէլ - Խեղկատակութիւն մի՛ ընէք, ժամանակը չէ, արդէն գինին ալ շատ էր:

Արմենակ - Սամուէլ իրաւունք ունի. տակաւին մեր գողգոթան չէ վերջացած. շատ կրելիքներ ունինք. թերեւս վերջնական կատաղի յարձակում ալ ընեն: (Հեռաւոր փողի ձայն) Մեր փողին ձայնն է. Վաղինակ եւ Միհրան, նայեցէք, ի՞նչ կայ (Երկուքը կը մեկնին):

Վահան - Արմենակ, ինծի ալ գէնք տուր, ես առաջին դէպքեր վրայ պիտի կողմնակիմ: Որքան արցունք թափեցի՝ այնքան արեւն պէտք է թափեմ:

Արմենակ - Պատերազմը կատակ չէ, եւ քեզի համար ալ չէ. դուն պարիսպներուն վրայ երբեք չես ելլեր. քու վրէժդ մենք կ'առնենք:

Վահան - Կ'աղաչեմ, Արմենակ, չնորհէ ինձ այդ ուրախութիւնը:

Արմենակ - Կ'ուզե՞ս օրինակելի զինուորական մը ըլլալ:

Վահան - Նոր Մուշեղ մը պիտի ըլլամ:

Արմենակ - Քաջ զինուորականի առաջին պարտականութիւնը՝ հնազանդութիւնն է: Հիմա դնա հանգչէ վրանիս մէջ եւ պարիսպին վրայ երբեք չես երեւնար: (Վահան գլխիկոյ կը մեկնի):

Սամուէլ - Երկաթի պէս է, անվախ, տոկուն եւ ջերմ քրիստոնեայ: Պարսիկները վրան հիացեր էին: Վասակին համար

կատարեալ յաղթանակ մ'էր Վահանն յափշտակելը:

Արմենակ - Կատարեալ Մամիկոնեան մը:

Սամուէլ - Վստահ եմ թէ Հայաստան մօտ ապագային նոր հերոս մը պիտի ունենայ:

Արմենակ - Սամուէլ, քու հոս գալը նախանձամական եղաւ, դուն լեզուանի ես, խօսքերդ համոզիչ են. դնա՛, մտիր ժողովուրդին մէջ, խօսէ եւ քաջալերէ. եթէ տակաւին դաւեր կան՝ մերկացուր,

Սամուէլ - Ի՞նչ, հո՞ս ալ դաւեր կան:

Արմենակ - Մէկը կար որ կ'ուզէր յեղափոխութիւն հանել, ամբոյրը գրգռեց, վրաս յարձակում գործեց եւ կեանքը վերայ տուաւ:

Սամուէլ - Ժողովուրդէ՞ն մէկը:

Արմենակ - Ո՛չ, դժբախտաբար սպայ էր եւ Սուրէն կը կոչուէր: Մեր գրութիւնը սոսկալի է. գէնք եւ պատերազմող ունինք, սակայն մեր պարէնները սպառնալու վրայ են, որոշած ենք անօգուտ բերանները՝ ծեր, կին, մանուկ, թշնամիին յանձնել: Գիտեմ սարսափելի որոշում է, սակայն ի սէր հայրենիքի՝ պէտք է դո՛հենք, այսպէս թերեւս մէկ երկու ամիս ալ գիմանանք. յետոյ Աստուած գիտէ:

Սամուէլ - Իսկապէս սարսափելի որոշում է. սպաներու, զինուորականներու կիները կան, քու կինդ ու տղադ կան:

Արմենակ - Առաջինը իմ կինս ու տղաքս դուրս պիտի հանեմ: Մահեր կան՝ որ սոսկալի են, բայց անհրաժեշտ են. դիտեմ, զիրենք պիտի անպատուեն, խողխողեն. սակայն Արմաւիր կեանքերու գնով միայն կը պաշտպանուի. դուն գիտես թէ Սպարապետը որքան խիստ հրահանգ տուաւ:

Սամուէլ - Իմ կարծիքովս զօրավարին գալը եթէ ոչ օրերու՝ մէկ երկու շաբաթի խնդիր է:

Արմենակ - Բայց յուր ունի՞ թէ պաշարուեր ենք, անօթի ենք, ծարաւ ենք:

Սամուէլ - Թերեւս անորոշ լուրեր ունենայ. յարաբերութիւնները խզուեր են: Զամբուն վրայ ցան ու ցիր Պարսիկներ կան, բերդեր կան՝ որ գրաւած են, գանոնք պէտք է աւլէ ու սրբէ՝ որ մեր թիկունքը ապահով ըլլայ:

Արմենակ - Տեսա՛ր, ուրեմն, վերադարձը կրնայ ամիս մը տեւել:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Կիմ մը, Արմենակ, Սամուէլ, յետոյ Վաղինակ եւ Միհրան

Կիմ մը - (Գոգնոցին մէջ ոսկորներ դրած՝ դուրսէն կը պոռայ) Սպաննեցէք զիս, ես ոճրագործ եմ, ես մայր չեմ: (Բեմ ելլելով) Հրամանատարը կ'ուզեմ, թող զիս սպաննէ:

Արմենակ - Առաջ եկուր, ի՞նչ կ'ուզես:

Կիմը - (Գոգնոցը բանալով) Ահա իմ փոքրիկիս ոսկորները, զայն միւսներուն հետ կերանք, վաղը ուրիշի մը զաւակը պիտի ուտենք: Ոյժ չունիմ, սովահար եմ: Արտասուելու արցունք չունիմ, ապրելու փափաք չունիմ. ես ոճրագործ թշուառական եմ, ես մայր չեմ, գայլէն աւելի զաղան եմ: Սպաննեցէք զիս:

Վաղինակ - (Միհրանին հետ մերս գալով) Տէր Աստուած, աս ի՞նչ տեսարան է:

Կիմը - Գէթ դուն սպաննէ զիս, ես ոճրագործ եմ (Վաղինակին):

Արմենակ - Տարէք այդ թշուառական կինը եւ պարիսպէն վար նետեցէք (Ընդհանուր սարսուռ): Ապրելու արժանի չէ: (Պահակը փաշկոտելով դուրս կը հանէ):

Կիմը - Հոս, հոս սպաննեցէք, ես սուրով մեռնիլ կ'ուզեմ, դուք առէք զաւակիս վրէժը:

Սամուէլ - Արմենակ, մէկ հոգի պէտք է զոհուի, հիմա կը գգամ բերդին սարսափելի զրուծիւնը, մեղք է այս թշուառ ժողովուրդը:

Արմենակ - Ես պատրաստ եմ մեռնելու, եթէ իմ մահովս բերդն ու ժողովուրդը պիտի ազատի:

Սամուէլ - Ո՛չ, ես պէտք է զոհուիմ. առանց քեզի՝ Արմաւիր չի գիմանար թըշնամիին: Այս գիշեր ես չուանով բերդէն վար կ'իջնեմ, մութէն ողորդելով կը խառնուիմ պարսիկներուն հետ, ամէն ջանք կը թափեմ լուր հասցնել մեծ զօրավարին, զէթ արագընթաց ձիւորները զրկէ եւ բերդին պաշարումը վերցնէ:

Վաղինակ - Սամուէլ, դուն վտանգներ սիրող մէկն ես, չեչտակի մահուան դէմ կ'երթաս:

Արմենակ - Համբերէ՛, մահուան դեղեցիկ օրն ալ կու գայ՝ պատերազմի դաշտին մէջ կողք կողքի մեռնելու:

Սամուէլ - Այդ կնոջ զէպը զիս շանթահարեց, հիմա կը գգամ թէ որքան ծանր է բերդին կացութիւնը:

Միհրան - Բայց մենք պատրաստ ենք

ամէն զնով դիմադրել եւ մահուան եւ թշնամիին:

Արմենակ - Ի՞նչ էր այդ ահազանդի փողը:

Վաղինակ - Պարզապէս նախազգուշութեան համար էր, պարսպին տակ՝ մէկը ճրագով իր մեռած որդին կը փնտռէր:

Սամուէլ - Արմաւիր Յաղկերտի կողին խրած եղէգ մ'է՛ որ զայն արիւնքամ կ'ընէ, եւ ամէն զոհուածութեամբ պէտք է պաշտպանել:

Արմենակ - Ուրեմն, իրաւունք ունիմ անօգուտ բերաններէն ազատիլ:

Սամուէլ - Քիչ մ'ալ համբերէ, թերեւս փրկութեան յոյս մը հասնի:

Արմենակ (Վաղինակին) Ի՞նչպէս է մեր զինուորին բարոյական կորուրդը:

Վաղինակ - Շատ բարձր է, ամէն յարձակումի՝ ոչինչ վնասով մահեր կը սրփոեն եւ կ'ուրախանան:

Միհրան - Բաւական խանդավառութիւն կայ բանակին մէջ, սակայն տպաւորուած են ժողովուրդի վիճակէն. շատեր իրենց ընտանիքներն ունին, կը ստիպուին հացերնին կիսել:

Սամուէլ - Պատահական յաջողութիւններու խանդավառութիւնը բոցի կը նմանի, կրնայ խսկոյն մարել՝ եթէ զէջ հով մը փչէ:

Արմենակ - Ամէնէն մտահոգիչը ժողովուրդն է:

Վաղինակ - Իսկապէս, բերդը կարծես մեռելատուն է: Սովը սեւ ճիւղի պէս ընտանիքէ ընտանիք կը շրջի եւ մատաղ կեանքեր կը հնձէ:

Արմենակ - Սամուէլ, ես շատ համաձայն չեմ քու մեկնումիդ, չար նախազգացում մը սիրտս կը կրծէ:

Սամուէլ - Չար նախազգացումը կիներու յատուկ հիւանդութիւնն է:

Վաղինակ - Ես ալ համաձայն չեմ մեկնումիդ. անխոհեմ քայլ մը կ'առնես:

Միհրան - Դուն շատ տպաւորուեցիր եւ վասակին մութ սկզբունքներէն. մոլոր ճամբաները շատ անգամ խորխորատ կը տանին:

Սամուէլ - Բերդին կացութիւնը շատ ծանր է. կրնայ վայրկեանէ վայրկեան դահաժիթիլ:

Վաղինակ - Հո՛ս կեցիր, եթէ մեռնիլ կայ՝ բոլորս միասին կ'ըլլանք:

Սամուէլ - Սրտիս մէջ փոքրիկ յոյս մը կայ, բախեք անոր դռներն ալ: Ես կը մեկնիմ: (Մեկնելու վրայ կ'ըլլայ):

Արմենակ - Սամուէլ...

Սամուէլ - Ըսէ՛, Արմենակ։
 Արմենակ - Առանց համբուրի՞ կը մեկ-
 նիս. թերեւս վերջին տեսութիւնն ըլլայ։
 Սամուէլ - Միտոս մի՛ խոցեր. ամօթ է
 զինուորականի մը համար լացը։
 Վաղինակ - Կեցի՛ր, գէթ պարիսպնե-
 րուն տակ խուզարկենք, մարդ չըլլայ։
 Սամուէլ - Կէս զիշեր է. վարը լուռ-
 թիւնը կատարեալ է, չեմ կարծեր վայր-
 էջք տեսնեն։
 Արմենակ - Հարկ չկայ հիւսիսային
 կողմն երթալու, բարեբախտաբար մութը
 փոշիի պէս թանձր է։ (Վաղինակին) Զը-
 ւանէ սանդուղը ապահո՞ւմ է։
 Վաղինակ - Կարելի է գոմէշ մ'ալ վար
 իջեցնել։
 Արմենակ - Սամուէլը պակաս ծանր չէ։
 Սամուէլ - (Համբուրելով բոլորին
 հետ) Մնաս բարով, Արմենակ։ Վաղի-
 նակ, քաջ եղիր. Միհրան, երիտասար-
 դութիւնդ թանկ ծախէ։
 Միհրան - Յաջողութիւն, Սամուէլ։
 Վաղինակ - Աստուած հետդ ըլլայ։
 Արմենակ - Թող Լուսաւորչի Կանթեղը
 քեզ առաջնորդ ըլլայ։
 Միհրան - Սամուէլ, զգոյշ եղիր, մա-
 հը շուքի պէս ետեւէդ կու գայ։
 Սամուէլ - Ա՛լ Աստուծոյ ձգենք յաջո-
 դութիւնը։
 Արմենակ - Միհրան, Վաղինակ, սան-
 դուղն ուժով բռնեցէք։ Առանց ձայնի վար
 կախեցէք։ (Սամուէլ բարեւելով սանդու-
 ղէն կը սկսի իջնել)։
 Միհրան - Միտոս ալիքի պէս կը զարնէ։
 Վաղինակ - Արդէն գետին հասաւ. կար-
 ծես փոփոխութիւն մը ելաւ։
 Արմենակ - Այո՛, խօսակցութիւն մը կը
 լսուի. դժոխքի պէս ալ մութ է։
 Միհրան - Վայրկեան մը. մէկը վարէն
 պոռայ. «Ո՞վ է»։
 Վաղինակ - Անպատճառ զինքը տեսն։
 Արմենակ - Սամուէլի ձայնն է. լուռ-
 թիւն... «Ես... Վասակի... գործակա-
 տարն եմ» պատասխանեց։
 Միհրան - Պահալը գոհ չեղաւ Սամուէ-
 լի պատասխանէն. նորէն «Կեցի՛ր» պոռայ։
 Վաղինակ - Եթէ մութ չըլլար՝ այդ
 շունը կը սատկեցնէի։
 Արմենակ - Վայրկեան մը, Վաղինակ...
 պահալը բան մ'ըսաւ։ «Հոս ի՞նչ կ'ընես»
 հարցուց։
 Միհրան - Սամուէլին ձայնը կու գայ...
 մտիկ ընենք... «Եկած եմ տերօջ մէկ
 սիրելի մեռելը փնտռելու»։
 Վաղինակ - Ուրի՛, ձայնը ալ խառնը-
 րէ։
 Արմենակ - Սամուէլ, հոգիս... դժբախտ
 հերոս. անմահ զինուոր Սամուէլ (Ընդ-
 հանուր սարսուռ եւ հեծեծանք)։ Արմենակ
 գլուխը գիրկը կ'առնէ)։
 Միհրան - Կորսուած ենք։
 Վաղինակ - Բանալ զոնքը, դուրս խո-
 յանալ, քարգել եւ մեռնիլ։
 Արմենակ - Թող ժողովուրդը չգիտնայ
 եւ ոչ ալ զինուորները իմանան, անոնք
 յուսալքութեամբ աւելի աղիտաբեր կ'ըլլայ։
 Սպաննեցին մեր սիրելի Սամուէլը։

Լեցան... «Յերեկը չգայի՞ր» պատասխա-
 նեցին։
 Արմենակ - Նայինք Սամուէլին ի՞նչ պի-
 տի պատասխանէ... «Յերեկը վտանգաւոր
 է... վերէն կրնան զիս սպաննել»։
 Միհրան - Կարծես քիչ մը լուռութիւն տի-
 րեց։
 Վաղինակ - Ո՛չ, խուլ խօսակցութիւն
 մը կայ... կեցէ՛ք. մէկը պոռայ. «Սպա-
 նեցէ՛ք, լրտես մը պիտի ըլլայ»։
 Արմենակ - Կարծես թէ կ'ըսեն. «Ան-
 պատճառ պարիսպէն իջած է վար»... Ա-
 նէ՛ծք, ամէն բան վերջացաւ։
 Վաղինակ - Մի՛ յուսահատիր, Արմե-
 նակ. Սամուէլ լարծուն օձի պէս ինքզինքը
 կ'ապաստէ։
 Արմենակ - Այս չէր իր փնտռածը, կը
 խորհէր առանց նշմարուելու խառնուիլ
 մթութեան եւ խոյս տալ։
 Միհրան - Թերեւս յաջողի համոզել՝ թէ
 մեռել փնտռող է։
 Արմենակ - Պարապ յոյսեր են, անոնք
 կռահեցին թէ պարիսպէն իջած է։ Անխո-
 հեմ աղայ։ Հազար անգամ ըսի՝ մի՛ եր-
 թար, վտանգաւոր է։
 Վաղինակ - Սիւնեաց լեռներու ետեւէն
 արշալոյսն արդէն սկսաւ բացուիլ։
 Արմենակ - Երջանիկ առաւօտ ոմանց
 համար, իսկ ուրիշներուն՝ սղաւոր քոյր։
 Միհրան - Հասած ենք արդէն մեր ողբ-
 երգութեան վերջին արարին, ոչ մէկ մար-
 տիրոսութիւն կայ՝ առանց պսակի։
 Վաղինակ - Ես դեռ յոյսս չեմ կտրած։
 Արմենակ - Կարծես վարէն խուլ աղ-
 մուկ կը լսուի։
 Միհրան - (Քիչ մը ուշ դնելով) Ճիշտ
 է, աղմուկ կայ... կը հայհոյեն... հայե-
 ընէն է...
 Դուրսէն - (Շատ խորէն) Առէք ձեր
 լրտեսին գլուխը... Վասակի նուէրն է
 (Բեմին վրայ կը նետեն Սամուէլի գլու-
 խը)։
 Արմենակ - (Մօտեցաւ) Ա՛հ, Սա-
 մուէլ, Սամուէլ, հոգիս... դժբախտ
 հերոս. անմահ զինուոր Սամուէլ (Ընդ-
 հանուր սարսուռ եւ հեծեծանք)։ Արմենակ
 գլուխը գիրկը կ'առնէ)։
 Միհրան - Կորսուած ենք։
 Վաղինակ - Բանալ զոնքը, դուրս խո-
 յանալ, քարգել եւ մեռնիլ։
 Արմենակ - Թող ժողովուրդը չգիտնայ
 եւ ոչ ալ զինուորները իմանան, անոնք
 յուսալքութեամբ աւելի աղիտաբեր կ'ըլլայ։
 Սպաննեցին մեր սիրելի Սամուէլը։

մեր սրտերը աւելի պիտի պնդանան, մեր
 վրէժը անողոք պիտի ըլլայ։ (Բռնցքը
 վեր) է՛յ, Վասակ, քու շան գլուխը պիտի
 թաղենք այս պարիսպներուն տակ։ Սիրե-
 լի Վաղինակ, (յուզումով) սիրելի Մի-
 հրան, մենք պիտի պայքարինք մինչեւ
 մահ, եթէ հարկ ըլլայ, օրհասական արջի
 պէս դուրս պիտի խոյանանք մեր որջէն՝
 մահ սփռելու եւ ապա մեռնելու (կը համ-
 բուրան)։
 Վաղինակ - Այս բազուկը պիտի չդո-
 ղայ, այս սուրը պիտի չյայտնայ։
 Միհրան - Քու սուրը վրէժդ ես պիտի
 առնեմ, սիրելի՛ Սամուէլ։
 Արմենակ - Կ'երգնում առաջուանէ ա-
 լելի կատաղի գազան դառնալ, միայն քե-
 ղի համար, սիրելի Սամուէլ։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՄԵԿԵՐՈՐԴ

Վահան եւ վերինները

Արմենակ - (Քովիմներուն) Ծածկեցէք
 արիւնոտ գլուխը, Վահանը կու գայ։
 Վահան - (Բեմին մէջ գալով) Շատ
 հանդիստ քուն եղայ, ամիսներէ ի վեր
 կարօտ կը քաշէի այսպէս հանգիստի մը։
 Ո՛ւր է Սամուէլը։
 Արմենակ - Սամուէլը... (Ետեւ դար-
 ւած՝ արցունքները կը սրբէ)։
 Վաղինակ - Սամուէլը մեկնեցաւ։
 Վահան - Ո՛ւր, ե՞րբ, ի՞նչպէս թէ մեկ-
 նեցաւ։
 Արմենակ - Իր անձը գոհեց մեր փրկու-
 թեան համար։
 Վահան - Շուտով կը վերադառնա՞յ։
 Արմենակ - Թերեւս մենք երթանք զինքը
 գտնելու։
 Վաղինակ - Երբ մեծնաս՝ դուն ալ պի-
 տի զգաս թէ զինուորը կ'ապրի եւ չա-
 պրիւր. մահը իր շուքն է, իսկ կեանքն առ-
 ջեւէն միշտ խոյս կու տայ։
 Վահան - Արդեօք տխուր բա՞ն մը կայ։
 Միհրան - Ո՛չ, շատ ուրախ, շատ փա-
 ուտուր, երջանիկ հայրենիք՝ որ այսպիսի
 դաւակներ ունի։
 Վահան - Ինչո՞ւ մահուան վրայ կը խօ-
 սիք։
 Արմենակ - Մահը մեր փառքն է՝ երբ
 հայրենիքի համար է։
 Վահան - Այո՛, որպէ՛զի Հայաստան
 միշտ ապրի։
 Արմենակ - Եթէ օրինակի համար, ես
 մեռայ, Վաղինակը, կամ Միհրանը եւ
 կամ Սամուէլը, ի՞նչ նշանակութիւն ու-

նի. մենք կանք ու չկանք, ազգն է յաւեր-
 ժական։
 Վահան - Տխուր բան մը կայ, եւ դուք
 ինձմէ կը ծածկէք։
 Վաղինակ - Ո՛չ, Վահան, շատ ուրախ
 բան է, Սամուէլ մեռաւ իր սիրելի ազգին
 համար։
 Վահան - Ե՞րբ, ի՞նչպէս, դեռ քիչ ա-
 ռաջ հոս էր, ուրախ էր։
 Արմենակ - Դուն քաջասիրտ տղայ ես,
 կը դիմանաս ցաւերուն. Սամուէլ ուզեց
 վարդանին երթալ եւ մեզի օգնութիւն
 հասցնել... սակայն պարսպին տակ բռ-
 նուեցաւ եւ... կեանքը վրայ տուաւ։ Գե-
 ղեցիկ է հայրենիքի համար մեռնիլ, այն-
 պէս չէ՞, Վահան։
 Վահան - Այո՛, բայց Սամուէլը (Պա-
 տանիմ կու լայ)։
 Արմենակ - Դու պէտք չես լալ, նա միշտ
 մեր մէջն է (Վարէն ուժեղ փողերու
 ձայն)։
 Միհրան - Փողերու ձայները գէշ նշա-
 նակութիւն ունին, անպատճառ յարձա-
 կում կայ։
 Վահան - Սամուէլին վրէժն ես պիտի
 առնեմ։
 Վաղինակ - Վերջին տխուր դէպքէն քա-
 ջալերուած պիտի ըլլան. անոնք անպատ-
 ճառ կը կարծեն՝ թէ մենք յուսահատ վի-
 ճակի մէջ ենք։

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Վարսենիկ եւ վերինները

Վարսենիկ - (Երիտասարդ կին մը բեմ
 գալով) Հրամանատար Արմենակ, ես Սու-
 ընի տիկինն եմ. եկած եմ քեզմէ խնդրե-
 լու որ ինձ սուր մը տաս՝ պարիսպին վը-
 րայ կոտելու համար։ Ամուսինս դժբախ-
 տաբար փառ անունով մեռաւ, ես չեմ ու-
 զեր որ իմ եւ զաւակներուս վրայ արատ
 մը մնայ։ Արիւնը արիւնով պէտք է սրը-
 բել. սուր մը տուր, որ ձեր կողքին կըռ-
 ուիմ թշնամիներու դէմ։
 Արմենակ - Դուն պէտք էիր հագուիլ
 ամուսինիդ զգեստները, եւ Սուրէնը՝ քո՛ւ
 զգեստներդ։
 Վարսենիկ - Զգային եւ հիւանդոտ էր,
 ես կը ցաւեմ իր վրան, որ չգիտացաւ
 կեանքի այս փորձին։
 Վաղինակ - Առաջարկդ արդէն քեզի եւ
 զաւակներուդ պատիւ կը բերէ։
 Վարսենիկ - Պատիւը պէտք է արիւնով
 գնեմ. ինձի գէ՛նք տուէք։
 Արմենակ - Մենք քու տեղդ կը մար-

տրնչինք, տիկին. դուռն դնա՛լ զաւակներդ հողա. յարձակումի ժամանակ՝ կրնան վախճալ:

Վարսենիկ - Երկու հատ են, զանոնք ալ քովս պիտի առնեմ, որ տեսնեն թէ վախ-կոտ հօր մը տեղ՝ քաջարի մայր մը ու-նին: Ինծի զէնք տուէք:

Միհրան - Ձեզ կը վստահեցնեմ թէ հայ կիներ յաճախ աւելի քաջարի է՝ քան այ-րերը:

Վաղինակ - Անդդ զիւղի ապստամբու-թիւնը մեծ մասով կիներուն կը պարտինք:

Արմենակ - Վարդան լալով կը պատ-մէր՝ թէ ինչպէս էր Սահականոյ՝ կիներ սահմանին վրայ զինքը ետ մղեց, եւ թող-չառուս որ աղջիկն ու զինքն համբուրէ. Դու զաւանան մատնիչ ես, պոռացեր է երեսին:

Վարսենիկ - Ինծի զէնք տուէք:

Արմենակ - Այո՛, տիկին Վարսենիկ, զէնք ալ պիտի ունենաս եւ մեր բազումն ալ՝ քեզ պաշտպանելու:

Վարսենիկ - Եթէ քանի մը կեանքեր հնձեմ, սիրտս տեղը պիտի երթայ. ես շատ խռոված եմ, զիշերները քուն չու-նիմ: Սուրէնին մօտս զէնքը աչքերուս առջեւն է: Ձէնք տուէք՝ որ նա հանգիստ քուն ունենայ:

Արմենակ - (Միհրանին) Միհրան, վը-րանիս մէջէն դուրս բեր սաղաւարտ մը, վահան մը եւ աղեղ մը:

Միհրան - (Ձեռքերը բերելու կ'երթայ): Վաղինակ - Քաջարի սպայ մը պիտի ու-նենանք:

Արմենակ - Իր ամուսինին աստիճանը իրեն պիտի տամ:

Վահան - Ինծի ալ զէնք տուէք. Սա-մուէլի վրէժը պիտի առնեմ:

Արմենակ - Դուռն լուռ կեցիր, դեռ տղայ ես:

Միհրան - (Ձեռքերը բերելով) Վարսե-նիկ, քեզի քաջութիւն եւ յաղթանակ կը մաղթեմ:

Արմենակ - (Վարսենիկին) Դիր սաղա-ւարտ եւ ուսէդ կախէ աղեղն ու վահա-նը: (Վարսենիկ կը զինուի):

Վաղինակ - Գեղեցիկ սպայ մը եղար: (Դուրսէն կը լսուի քշմամի փողերու ձայն):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Պահակ եւ վերինները

Արմենակ - Թշնամի փողերը նորէն բա-կըսան հնչել. յարձակումը մօտալուտ է:

Պահակ - (Բեմ ելլելով) Տէր հրամա-նատար, բերդի հիւսիսային կողմէն բռնու-յարձակում սկսաւ:

Արմենակ - Ի զէն... Վաղինակ, թուր հիւսիսային կողմը. Միհրան, դուռն հա-րաւն անցիր. արեւելեան կողմը անառիկ է, բաւական են քանի մը պահակներ. ես, հոս արեւմտեանը կը բռնեմ: Վարսենիկ, դուռն իմ հետս կը մնաս. դուռն ալ, Վա-հան, քովէս չես հեռանար եւ ոչ ալ պա-րիսպին կը մօտենաս. յանկարծ վարէն ա-ղեղ կը քաշեն: (Պահակին) Գնա՛, լուր տուր փողահարներուն՝ հնչեցնել պատե-րադմի փողերը (Պահակը կը մեկնի):

Վաղինակ - (Երթալով վրայ) Հազար-ներ պիտի հնձեմ (Դուրս կը խոյանայ):

Միհրան - Վրէժս վագրի պիտի նմանի (Դուրս կը խոյանայ: Հեռուէն՝ հայկա-կան փողի ձայն):

Արմենակ - (Բեմին եզերքին երթալով) Բերդակալներ, տեղերնիդ: Հիւսիսային կողմէն սանդուղներ կը բարձրանան, կը-րակ նետեցէք: Հոն, աշտարակի կողմը չուան նետեցին, կտրեցէք: Ապրի՛ք, փը-տած խնձորի պէս վար թափեցան: Հոն, անդին դարձեալ չուանէ սանդուղ նետե-ցին, վեր կը մաղլցին. քաշեցէք աղեղ-ները: Մա՛հ թշնամիներուն: Մէկը վեր ելաւ, զարկէ կացինով. ինկաւ...:

Վարսենիկ - Երկու հատ սատկեցուցի, Սուրէնին համար: Հոս ըլլալու էիր, դժբախտ ամուսին. ասիկա կոխ չէ, հանդէս է:

Արմենակ - Դարձեալ սանդուղներ կ'եր-կարին... հրապարակ չիշեր նետեցէք:

Միհրան - (Բեմ վազելով) Հրամանա-տար, բարաններն սկսան գործել:

Արմենակ - Իսկոյն տեղդ վազէ եւ հրա-վառ չիշեր նետեցէք: Ահա մէկը կրակ ա-ռաւ: Ապրին այդ կիները, լաւ է, քարեր թափեցէք զլուխներուն: Դաւաճան սիւ-նեցիններ, հայ գիւղերէն կին ու տղայ բե-րեր եւ բերդին տակ շարեր են: Ո՛չ, վա-սակ, Արմաւիր իր զոհները չի բանար: Մեղք որ զլուխդ ծածկեր ես, բայց մահդ մօտ է:

Վարէն - (Ուժով ձայնով) Անձնատուր եղէք. եթէ ոչ՝ բոլորդ կը մորթենք: Քա-ջութիւն, ուրիշ բարաններ բերէք. բերդը ինչալու վրայ է: Կեցցէ՛ Յաղկերտ. Որ-միդդ մեծ է:

Վահան - Եկէք, եկէք, իժի ձագեր. սիւնեցիններ են: Ձեր մայրերը պիտի լա-ցենք:

Արմենակ - Վահան, աշտարակներու

վրայ մի՛ ելլեր. հեռու կեցիր: Նետերու տարափ մը սկսաւ:

Վահան - Ձէնք տուր, չեմ դիմանար:

Վարսենիկ - Ձեր աղտոտ հայհոյանք-ները ձեզի կը դարձնեն: (Քաշելով աղե-ղը) Ա՛ն քեզի:

Վահան - Աղեղ մը, աղեղ մը, չեմ դի-մանար: Ի՛նչ գեղեցիկ պատերազմ է: (Ա-ղեղ մ'առնելով) Ահա դտայ:

Արմենակ - Տղա՛յ, հեռու կեցիր. ի՛նչ կ'ընես:

Վահան - Պատերազմ կ'ընեմ:

Արմենակ - Ետ կեցիր, մէկը վեր կը բարձրանայ: (Սուրբ փաշելով) Մեռի՛ր, դաւաճան սիւնեցի:

Վահան - Ահա ուրիշ մը. Արմենակ, զա՛րկ:

Վարէն - Քաջութիւն, ահա վեր ելանք:

Վահան - Ելի՛ր, ելի՛ր, քեզի ալ բաժին կայ:

Արմենակ - Վահան, հեռու կեցիր: Ան-խոհեմ տղայ:

Վարսենիկ - Ա՛հ. նետ մը եկաւ ոտքե-րուս (Գետին կ'իյնայ եւ Վահան զինքը կը վերցնէ ու հեռու կը տանի):

Արմենակ - Քաջութիւն, Վարսենիկ:

Վարսենիկ - Ոտքս կապեմ՝ նորէն պի-տի դամ: Մինչեւ մահ պիտի կռուիմ:

Վահան - (Ետ գալով) Արմենակ, բա-րաններն սկսան ուժգին բախել պարիս-պը:

Արմենակ - Հող մի՛ ընեք. տարի մ'ալ զարնեն՝ չեն կրնար փլցնել:

Վահան - Տե՛ս, անդիէն մէկը վեր կը բարձրանայ: Ես պիտի սատկեցնեմ:

Արմենակ - Ետ կեցիր, հիմա նետ մը կու գայ:

Վահան - (Ուժով խնդալով) Արմենակ, հիւսիսային կողմը երկու բարան կրակ ա-ռին:

Վարսենիկ - (Դարձեալ իր տեղն եր-թալով) Մէկ վէրքի տեղ՝ տասը կեանք կ'ուզեմ:

Վահան - Արմենակ, հեռու հորիզոնին վրայ սեւ կէտեր կը տեսնուին:

Արմենակ - Թշնամին անպայման նոր ոյժեր կը բերէ:

Վարսենիկ - Մեր հունձքն ալ աւելի ա-ռատ պիտի ըլլայ. մէկի տեղ՝ երեք հատ կը սպաննենք:

Վահան - Աստուած իմ, դուռն հասիւր օգնութեան: Ա՛հ. ոտքս, ոտքս. նետ մը մտաւ (Ետ կը փաշուի ոտքը բռնած):

Արմենակ - Անխելք տղայ, հազար ան-գամ ըսի՝ աշտարակին վրայ մի՛ ելլեր:

(Վարսենիկին) Վարսենիկ, սա տղուն ոտ-քը կապէ եւ գեղ դիր, արիւն չկորսնցնէ: (Վարսենիկ կը կատարէ):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՉՈՐՍԵՐՈՐԴ

Միհրան եւ վերինները

Միհրան - (Բեմ գալով) Արմենակ, թըշ-նամին նոր ոյժեր կը համախմբէ, հե-ռուէն սեւ կէտեր տեսնուցան:

Արմենակ - Այո՛, սեւ կէտեր տեսնուե-ցան, մենք վախ չունինք՝ եթէ ամբողջ Պարսկաստանն ալ բերեն:

Վահան - (Աշտարակին վրայէն հեռու դիտելով) Արմենակ, Արմենակ, մերին-ներն են. տես Մամիկոնեան դրօշակը, կարմիր կերպասին վրայ՝ ոսկի խաչը կը փայլէ: (Կը ծնրադրէ եւ երեսը կը խա-չակնքէ):

Արմենակ - Վահան, ի՛նչ կ'ընես:

Վահան - Յաղթական սուրբ խաչը կ'ող-ջունեմ:

Վարսենիկ - Ճիշտ է, ճիշտ է. Վարդա-նի դրօշակն է:

Վահան - Փախէ՛ք սրիկաներ: Վասա՛կ, պաշտպանէ զլուխդ. թագդ թաւաղլոր վար կ'իյնայ:

Վարսենիկ - Բերդին տակը խուճապ սկսաւ:

Վահան - Դրօշակը առաջ կու գայ, դը-րօշակը արեւ կը դառնայ. տե՛ս, Արմե-նակ, ի՛նչ գեղեցիկ կը փայլէ:

Արմենակ - Վահան, իսկոյն դնա Վա-ղինակին եւ Միհրանին ըսէ՛, որ բերդին զոհները բանան եւ թշնամիին ետեւէն յար-ձակին:

Վահան - Ես ալ հետերնին հօրեղբորս կ'երթամ:

Արմենակ - Ո՛չ, դուռն իսկոյն քովս ե-կուր: Վերջին վայրկեանին փորձանք մը չհանես: (Վահան կը մեկնի):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐՉԻՆԳԵՐՈՐԴ

Վաղինակ եւ վերինները

Վաղինակ (Միւս կողմէն մերս գալով) Արմենակ, մեծ զօրավարը կը հասնի. հե-ռուէն իր դրօշակը երեւցաւ: Պարսպին տակ չփոթութիւն եւ խուճապ կայ: (Կը գրկուի) Բերդին ներսը չփոթ լուրեր կան. պէտք է դուռն հաղորդես այս ու-րախ լուրը:

Արմենակ - Ես ժողովուրդին կը հաղոր-դեմ. դուռն դնա՛, Միհրանին հետ զոհներ

բացէք եւ թշնամիին թիկունքէն յարձա-
կեցէք:

Վաղիմակ - Իսկոյն կը մեկնիմ. կը լսե՞ս
հեռաւոր չփոթ աղմուկը (Հեռաւոր աղ-
մուկ. կը մեկնի):

Վարսենիկ - Նայեցէք, նայեցէք, ի՞նչ-
պէս փախուստ կու տան, նապաստակնե-
րու կը նմանին: Ա՛խ, Սուրէն հոս ըլլա-
լու էիր: Եթէ քիչ մը կորով ունենայիր՝
այդքան դժբախտ չէիր ըլլար:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՎԵՑԵՐՈՐԴ

Վահան եւ վերինները

Վահան - (Բեմ ելլելով) Նայէ, Արմե-
նա՛կ, հրամանդ կատարեցի, հիմա թոյլ
տուր որ ես ալ յարձակումի երթամ: Ին-
ծի կրակապաշտութիւն սորվեցնող մող-
պետը պիտի բռնեմ, քիչն օղակ պիտի
անցընեմ եւ արջի պէս պարել պիտի տամ:

Արմենակ - Կրկնել մի՛ տար, հոս կե-
ցիր՝ որ հօրեղբայրդ փառքով ընդունին:

Վահան - Պայմանով որ պաշտօնական
ընդունելութիւնը ես կատարեմ:

Արմենակ - Շատ լաւ, միայն քովէս
հանձնա՞ս (Բեմին եզերքին երթալով.
դուրսը ցնծութեան աղաղակներ): Չար-
չարուած ժողովուրդ, ազատութեան ժա-
մը հնչեց, Վարդան Մամիկոնեան արդէն
հասաւ իր բանակով եւ թշնամին պաշա-
րումը լքած՝ խոյս կու տայ:

Դուրսէն - (Աւելի մօտ աղմուկ) Կեցցէ՛
Վարդան. մա՛հ թշնամիներուն... Կեցցէ՛
... (Արմենակ մեկնելու վրայ):

Վարսենիկ - Իմ զինուորութիւնս վեր-
ջացաւ (Սաղաւարտը վար դնելով):

Արմենակ - Ո՛չ, դիր սաղաւարտդ, դուն
այդպէս պէտք է զօրավարին ներկայա-
նաս: (Կը մեկնի):

Վահան - Մե՛ղք, շատ ուշ դիւ հրամա-
նատար դրին. բայց օր մը երբ մեծնամ,
ես ալ սպարապետ պիտի ըլլամ: Ա՛խ, դէթ
այդ մողապետը բռնէի: (Դուրս գալով)
Տէր Աստուած, այս ո՛րքան գրօշակներ:
Դուրսէն - (Շարունակեալ խուլ աղ-
մուկ) Կեցցէ՛ մեր ազատարարը, Կեցցէ՛
Վարդան:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՆԵՐՈՐԴ

Վարդան Մամիկոնեան, Արշալիր Կամ-
սարական, Արմենակ, Վաղիմակ, Միքիլան,
Վահան, Վարսենիկ և անխօս զօրականներ
Դուրսէն - Կեցցէ՛ մեր զօրավարը: Վար-
դանը կ'ուզենք:

Արմենակ - (Առաջ մտնելով) Չօրա-
վարը ձեր մէջ պիտի ունենաք:

Վարդան - (Բեմ կ'ելլէ յաղթական եւ
վսեմ. իր ակնարկը բոլորին վրայ կը տի-
րէ):

Վահան - (Զինուորական բարեւ տա-
լով) Հօրեղբայր, պատիւն իմօ է քեզ ող-
ջունելու Արմաւիրի պաշտպաններու կող-
մէն՝ իրրեւ ազատարար:

Վարդան - (Գրկելով Վահանը) Վահա-
նիկ, զաւակ: Շնորհակալութիւն քեզ,
Աստուած, որ այս մեծ շնորհքն ըրիր մե-
զի: (Արմենակին) Արմենա՛կ, հրաման ը-
րէ՛ ժողովուրդին որ ազատութիւն դուրս ել-
լէ. թշնամիներու ստուերն ալ չմնաց,
բայց առատ աւար ձգեցին, թող հաւա-
քեն ու տանին: Իսկ Սամուէլն արդեօք
ո՞ւր մնաց:

Արմենակ - (Գլուխը կախ) Սամուէլը
մեռաւ իր ազգին համար:

Վարդան - Ի՞նչպէս, քու քովդ չէ՞ր:

Արմենակ - Իր հանդարտութեամբ Վա-
հանիկն ազատեց Պարսիկներու ձեռքէն,
եկաւ Արմաւիր. տեսաւ մեր ահաւոր կա-
ցութիւնը, ուղեց զաղտնի դալ եւ ձեզի
լուր հասցնել... բայց պարսպին տակ
բռնուեցաւ եւ սպաննուեցաւ:

Վարդան - Մե՛ղք, մե՛ղք. Արմաւիրը
շահեցանք, բայց սիրտ մը կորսնցուցինք:

Արմենակ - (Աչքերը քաց) Անձնագոհ
զինուորականի մը հողին իր ընկերներէն
միշտ անբաժան է:

Արշալիր - Արմաւիրի դիմադրութիւնը
մեր ապագայ յաղթանակներուն բանալին
է, մեր մեծ յաղթանակն եղաւ:

Վարդան - Այս յաղթանակը մերը չէ՛,
Արշալիր, այս հերոս ժողովուրդին եւ իր
քաջարի պաշտպաններուն է:

Դուրսէն - (Կիներու ձայներ) Վարդա՛ն,
օրհնեալ ըլլաս, դու մեր փրկիչը, դու մեր
փառքը, դու ցնծութիւն Հայաստանի:

Վարդան - Խմբապետներուն պատուի-
րեցէք որ ժողովուրդին առատ հաց եւ
ջուր տան. միայն ուշադիր եղէք որ քիչ
ուտեն. սովահար մարդիկ շատակերու-
թենէ կը մեռնին:

Դուրսէն - Վարդանը կ'ուզենք, իր ոտ-
քերը պիտի համբուրենք:

Վարսենիկ - (Իր երկու մանուկները
բերելով) Տէր զօրավար, այս երկու զա-
ւակներս հայրենիքին կը նուիրեմ. թող
իրենց դժբախտ հօրը արատը օր մը ա-
րիւնով իրենք սրբեն:

Վարդան - Ո՞վ է, այս զինուորականի
տարագով կինը:

Արմենակ - Հարիւրապետ Սուրէնի տի-
կինն է, դժբախտաբար ամուսինը ուղեց
բերդին դաւել եւ մեր սուրով ինկաւ. իսկ
կինը հերոսի պէս կռուեցաւ:

Վարսենիկ - (Սաղաւարտն հանելով եւ
գէնքերը Վարդանի ոտքերուն տակ դնե-
լով) Իմ զինուորութիւնս վերջացաւ. դայն
պիտի շարունակեն այս երկու մանչերս:

Վարդան - (Սաղաւարտը կնոջ գլուխը
դնելով) Դիր սաղաւարտդ եւ ա՛ն զէն-
քերդ, ատոնք քու չքանչանքերդ են, պա-
տիւ է հայրենիքին՝ այսպիսի հերոս կի-
նէր ունենալը:

Դուրսէն - Վարդա՛նը... Վարդա՛նը:

Վաղիմակ - Տէր սպարապետ, ժողո-
վուրդն իր արդար իրաւունքը կը պահան-
ջէ, ցոյց տուէ՛ք ինքզինքնիդ:

Միքիլան - Շատ անհամբեր են. կրնան
աւելի խռնուիլ եւ զիրար կոխկռտել:

Վարդան - (Մէջտեղ եւ սպանները իր
շուրջը, բովը Վարսենիկ) Չարչարուած
եւ նահատակ ժողովուրդ, դուք դիւ կ'ու-
ղէք իրր ազատարար ողջունել, բայց ա-
հա ձեզի կը ներկայացնեմ ձեր քաջարի
պաշտպանները: Չիրենք ծափահարեցէք,
փառքն ու պատիւն իրենց է: Մանաւանդ
այս երկաթի պէս Արմենակը, եթէ անո-
ղոք եղաւ՝ հայրենիքի հրամանը կատա-
րեց:

Արմաւիր մեր յաղթանակներու բա-
նալին էր: Կովկասի մէջ ջախջախեցինք
թշնամին. Վրաստան եւ Աղուանիստան
փրկուեցան կործանումէ եւ եղան մեզի
եղբայրական դաշնակիցներ: (Վարէն՝
Կեցցէ՛ մեր յաղթական զօրավարը): Ես
Արմենակին կը շնորհեմ զօրավարութեան
աստիճան եւ Տրդատի ոսկեղէն չքանչա-
նը: Վաղիմակ եւ Միհրան կը ստանան
գնդապետի աստիճան եւ արծաթեայ չը-
քանչան. իսկ Վարսենիկ՝ մեր բանակը
խորհրդանշող ոգին պիտի ըլլայ:

Դուրսէն - Կեցցէ՛ (կը պոռան եւ երգի
ձայներ կու գան):

Վարդան - Երգեցէք, ձեր արդար իրա-
ւունքն է:

Վաղիմակ - (Միքիլանին) Հոս տիկերով
դինի պէտք էր:

Արմենակ - Այո՛, բերէք լաւագոյն գի-
նիներէն:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՆԵՐՈՐԴ

Արիստակէս եւ վերինները

Արիստակէս - (Երկու շիշ ձեռքն առած)
Ես պիտի լեցնեմ գինի, իմ իրաւունքս է:

Արմենակ - Վա՛յ, Արիստակէս, ուր-
տեղէ՞ն ուր: Հոս ի՞նչպէս եկար:

Արիստակէս - Մի՛ ըսէր, Արմենակ. այդ
անիրաւ Վասակը մարդ զրկեց եւ գինե-
տունս կրակի տուաւ՝ դիւ չղթալակապ
գերիներուն խառնեց՝ Պարսկաստան զըր-
կելու: Ես ալ օր մը փախայ եւ այս կող-
մերն եկայ:

Վարդան - Ո՞վ է այս մարդը:

Արմենակ - Արտաշատի նշանաւոր գի-
նեպանն է. մեղի շատ օգտակար եղաւ:

Արիստակէս - Տունս վառեցին, ամե-
նապատիւ տէր: Իսկ Արիստակէս, կը յի-
շե՞ս Արմենակ. գնաց կորաւ, շատ փըն-
տուցի ալ չգտայ:

Արմենակ (Վարդանին) Սամուէլին հա-
մար է ըսածը. իր գինեւան մէջ Արիստա-
կէս կը կոչուէր: (Արիստակէսին) Արիս-
տակէս, նա մեր սպաններէն էր, ոչ խուլ էր,
ոչ համբ: Վասակին թուղթերը թոցնոցը
ինքն էր: Բայց յետոյ իր կեանքը զոհեց
հայրենիքին համար:

Արիստակէս - Վա՛խ, վա՛խ, ես ալ ի-
րեն համար այնքան ծեծ կերայ: Ի՛հ,
մոռնա՛նք անցեալը: Տէր սպարապետ,
թոյլ տուէ՛ք ձեր թասը լեցնեմ (Կը լեցնէ
գինին. կը լեցնէ նաեւ միւսներուն քա-
սերը):

Վահան - (Թասն երկաթելով) Ինծի ալ
տուր, է՛յ, ես մարդ չե՞մ:

Արիստակէս - Դուն դեռ փոքր ես. գի-
նին քեզի գէշ կ'ընէ:

Վարդան - Լեցուր, հոգ չէ, թող քիչ մը
խմէ:

Վահան - Լեցուր, ի՞նչ ազահ ես:
Արմենակ - Խմենք մեր սիրելի սպարա-
պետին կենացը:

Վարդան - Ո՛չ, հայ ժողովուրդին եւ
Հայաստանի կենացը: Կեցցէ՛ Հայաստան
(կը խմեն):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՆԵՐՈՐԴ

Պարաւոր կիներու խումբ մը և վերինները

Պարաւորներ - (Դուրսէն երգով ու պա-
րով ներս կու գան):

Վարդան - (Պարի ժամանակ՝ Արմենա-
կին) Ժողովուրդը պէտք եղածն ունեցա՞ւ:
Արմենակ - Այո՛, ամէն բան ունեցաւ:

Պահակ - (Պարէն յետոյ) Տէր հրամա-
նատար, ժողովուրդը կը փափաքի տուն
վերադառնալ:

Արմենակ - Զինուորներէն մաս մը բեր-
դին մէջ կը պահենք եւ մաս մը կը զըր-
կենք ճամբաներուն վրայ:

Միհրան – ինձ մարդիկ, աւերակներ
պիտի գտնեն:

Վարսենիկ – Հայր մըջիւնի կը նմանի.
որքան իր բոյնն աւերեն՝ նորէն կը շինէ:

Վաղինակ – Կրնան աւարը տանիլ,
դիակները մերկացնել:

Արմենակ – Թող ուզածնին ընեն:

Վարդան – (Բեմին առջեւ) Սպանե՛ր եւ
զինուորներ: Մեր պատերազմը տակաւին
չէ վերջացած: Մենք յաղթեցինք Կովկա-
սի մէջ, բացինք ձորայ պահակը, Հոնե-
րը դաշնակից ըրինք: Արմաւիրը յաղթա-
կան մնաց, սակայն թշնամին դեռ մեր
երկրի սրտին մէջն է. տակաւին բերդեր
եւ դաւաճաններ իրենց ափին մէջն են:
Կը մնայ զերազոյն յաղթանակը, փրկել
մեր հայրենիքն ու կրօնքը՝ ահաւոր բռն-
նաւորի մը ձեռքէն: Մենք թէ ոչ՝
յաղթանակը միշտ մերն է, որովհետեւ
սուրբ եւ զերազոյն նպատակի մը համար
կը պատերազմինք: Դաւաճաններու տեղ՝

մեր կողքին ունինք սքանչելի ժողովուրդը
եւ հողեթոս վարդապետները, ունինք մեր
քաջարի բանակը եւ կիները: Մեր սուրբ
փայլակի պէս հատու պիտի ըլլայ շողա-
լու թշնամի պարանոցներու վրայ: Եր-
թանք դէպի նոր պատերազմ, երթանք
դէպի Ա. Ի. Ա. Ր. Ա. Յ. Ր.:

(Փողերը կը հնչեն եւ ամէնքը միասին
կ'երգեն «Արեւն ելաւ Զէյթունցիներ» ու
եղանակով):

Հայաստանի հերոս բանակ,
Պատերազմի սիրահար,
Դէպի կրօն եւ յաղթանակ,
Վարդաններու սուրին տակ:

Յառա՛ջ, յառա՛ջ երթանք մարտի,
Մահն անոյշ է մեզ համար.
Այսպէս կ'ուզէ մեր հայրենիք,
Մահն անոյշ է մեզ համար:

Վ Ե Ր Զ

Գրուած Հալէպ, 10 Մարտ 1951ին. վերամշակուած 27 Ապրիլ, 1961ին Վենետիկ

Հ Ե Ռ Ո Ւ ...

Բոլորը ալ փրփրած մտքէս հեռացէք,
Հին խոկումներ, անցեալիս չափ դիւքական,
Հիմակ այլեւս Ձեր նետերով չարանենգ
Մի՛ մահացնէք շիթ առ շիթ՝ գէթ իմ ներկան:

Բոլորդ իսկոյն տենդոտ սրտէս ա՛լ թըռէք,
Ո՛վ պարիկներ երանութեան աշխարհին,
Յամբած քիմիս դուք նագանձով մը բեկբեկ
Համը կու տաք Ձեր հեշտութեան պըտուղին:

Թող առանձին վըշտի ովկեանըս չափեմ,
Ինչպէս լընակս ուրախութեան ժպտադէմ
Կը դիտէի օր մը առաջ... բայց ինչո՞ւ

Կու գաք սփոփել երջանկութիւնս վաղամահ
Գարնան թռիչքով. ա՛լ անօգուտ է հիմա.
Մէրըս գընաց անվերադարձ եւ հեռու...:

Աթէնք, 15/12/1961

Յ. Ա. ՃԵԼԱԼԵԱՆ

Զ Ի Ն Ո Ւ Ո Ր Ի Ն

Զինուո՛ր, գոնէ, հետըդ գայի
Լուռ պահ մը միայն գիշերային
Երբ փունըդ չի՛ գիտեր երագ,
Գիշեր մը միայն անծայրածիր
Խաւարասոյց Տանթէական դրժնխփին պէս,
Երբ տեսիլներ կ'իջնեն, ահա՛.
— Շէն եմ, գիւղակըդ կը գրուցէ.
= Ցից պարեկները սուներս են, կ'ըսես ցածկեկ.
— Ճոխ եմ, սեղանըդ կը կանչէ.
= Ճաշըս փամփուշտն եւ ծըծումբը կը համեմեն, կը մըմընջես.
— Փարթամ եմ, կոչ կ'ընէ պարտէզդ.
= Ամէն մէկ նիւզ կըրակն այրեց, կը փըսփըսաս:

Զինուո՛ր, գոնէ, հետըդ գայի
Լուռ պահ մը միայն արշալոյսի,
Երբ չի՛ գտներ ձայնդ արձագանգ,
Միայն արշալոյս մը միապաղաղ
Ի՛նչպէս սառոյց մը անսահման բեւեռային,
Երբ շշուկներ կու գան, ահա՛.
— Շէն եմ, գիւղակըդ կը գրուցէ.
= Աշման շըշունջը կը շաչէ, կ'ըսես ցածկեկ.
— Ճոխ եմ, սեղանըդ կը կանչէ.
= Այ ու քացախ վախկոտ խիղճիս վրայ կը խնդան, կը մըմընջես.
— Փարթամ եմ, կոչ կ'ընէ պարտէզդ.
= Եղին կ'անի, հոն ճանկերով նիւաղային, կը փըսփըսաս:

Զինուո՛ր, գոնէ, հետըդ գայի
Լուռ պահ մը միայն միջօրէի,
Երբ չունի սիրտըդ բաքախում,
Միայն միջօրէ մը ամայի
Սահարայի անվերջ ոսկի աւազին պէս,
Երբ տրոփիւններ կ'եռան, ահա՛.
— Շէն եմ, գիւղակըդ կը գրուցէ.
= Ի՛նչ պըսպըղուն է մարմարինոն... իմ «Հերոս»ի գերեզմանիս.
— Ճոխ եմ, սեղանըդ կը կանչէ.
= Գինի՛ եւ սո՛ւրն հոն կը խըմեն... որ ինձ մոռնան, մըսիթարուին.
— Փարթամ եմ, կոչ կ'ընէ պարտէզդ.
= Աղուո՛ր վարդեր որ կը ծըծեն հողը կեանքովս պարարտացած:

Դու կը հեւաս. իսկ ես քեզի, Գուրն անծանօթ, կ'աղաղակեմ
Օ՛, ողջակէզ գինուոր, գոնէ այդտեղ միայն հետըդ գայի...:

Աթէնք, 24/4/62

Յ. Ա. ՃԵԼԱԼԵԱՆ